

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>




ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՄՈՆԹԵ (ԱՎՈ)

Օրացույց մինչև 2000 թվականը

ԵՐԵՎԱՆ



1994-ի հունիսի 12-ին ԼՂՀ Մարտունի քաղաքի կենտրոնում տեղադրվեց Մոնթե ՄելքոնՅԱՆԻ մարմարե հուշարձանը։ Նրա բարձրությունը 5 մետր է, կերտված է ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ գյուղի վարդագույն (կարմիր) մարմարից։ Հուշարձանի հեղինակներն են Հայր և որդի Լևոն և Վահե Թոքմաջյանները։ Քանդակագործ Լևոն Թոքմաջյանն այդ արձանը համարել է Մարտիրոս Մարյանի արձանից հետո իր մյուս գույնագործոցը։

ՄՈՒԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ (ԱՎՈՆ) ԵՎ ՔԱԶ
ԶՈՐԱԿԱՆ ԷՐ, ԵՎ ՔԱԶ ԶՈՐԱՎՈՐ

ԼՂՀ Մարտունի խաչ առաջին աստիճանի շքանշանը առաջինը
հատկացվել է առասպելական Ավոյին՝ Մոնթե Մելքոնյանին։

Խմբագիր՝ ՄԻՔԱՅԵԼ ԳԱՆՉԱԼՅԱՆ

ՀՈՒՆՎԱՐ

1995

1996

Երկուշաբթի	2	9	16	23	30	1	8	15	22	29
Երեքշաբթի	3	10	17	24	31	2	9	16	23	30
Չորեքշաբթի	4	11	18	25		3	10	17	24	31
Հինգշաբթի	5	12	19	26		4	11	18	25	
Ռուբաթ	6	13	20	27		5	12	19	26	
Շաբաթ	7	14	21	28		6	13	20	27	
Կիրակի	1	8	15	22	29	7	14	21	28	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԸ

Մնացան տոներ. դեկտեմբերի 31, հունվարի 1, 2 և 6 (նշված այս օրերը ոչ աշխատանքային են):

ՀԻՄՈՒՄ ՔԲԵՍՏՈՍԻ ՄՆՈՒՄԾԸ

Հիսուս Քրիստոսը ծնվել է 1995 տարի առաջ, Հրեաստանի թեթ-ղեհեմ քաղաքում: Հիսուսի ծննդյան օրվա մասին քրիստոնեական տարբեր եկեղեցիների մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Հայատանյայց առաքելական եկեղեցին Հիսուսի ծննդյան օրը համարում է հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը, արևմտյան եկեղեցիները (կաթոլիկական, բողոքական և այլն)՝ դեկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը: Քրիստոնեական այլ դավանակի հայերը մեծ մասամբ ընդունում են Հայոց առաքելական եկեղեցու հաստատում օրը: Հայ ժողովում մեզ այդ օրը կոչվում է նաև Փոքր Զատիկի:

Հայոց եկեղեցին Հիսուսի ծննդյան օրվա հետ միասին տոնում է նաև նրա մկրտության օրը, որը կոչվում է ջրօրհներ (խաչը ջուրն են գցում, ջուրն օրհնում և բաժանում ծողովրդին):

Հիսուսի ծնունդն այսօր մեզ համար խորհրդանշում է լույսի, սրբության, սիրո ծնունդ:

Ա. Մ Ա Ն Ո Ր

Ամանորը Հայաստանում սկսել են տոնել անհիշելի ժամանակ-ներից: Հրաշյա Աճառյանը հավաստում է, որ վաղնջահայերենում ամ և տարի բառերը հոմանիշներ չեն եղել: Մեր հները տարբերակել են դրանք: Այդ հեռավոր ժամանակներում տարի նշանակում էր բնդա-

մենը մի տարի, իսկ ամ տարիներ, հոլովք տարիներ: Եվ հայը ոչ միայն չի ասել հազար տարի, այլև երկու կամ երեք տարի, դրա փոխարեն նա ասել է հազար ամ, երկու կամ երեք ամ: Իսկ տարին խեղճ ու կրակ բառ էր և նշանակում էր միայն 365 օրվա գումարը: 5-րդ դարից այդ երկուսի տարրերությունը չնշվել է, և ամ ու տարի բառերը դարձել են կատարյալ հոմանիշներ: Արդեն 5-րդ դարում հայը տարի բառը գործածում էր նաև հոգնակի: Հետագայում ամ-ը որպես ինքնուրույն բառ մի կողմ կանգնեց, իր պարտականությունները հանձնեց ատարի բառին, և ինքը դարձավ սոսկ բարդ բառերի բազադավ բառը բառերի բազադավամաս: Այնուամենայնիվ, բառաբարդումները մեզ էլ նա պահեց իր վսեմ արժանապատվությունը. զառամյալ՝ խիստ ծեր, հնամյա՝ շատ հին, հազարամյա՝ հազար տարեկան, բազմամյա՝ բազմում տարիների...

Ամանորը կազմված է 3 բաղադրամասից. ամ (տարի) պլյուս ա (հոդակապ), պլյուս նոր, այսինքն՝ նոր տարի: Ամանոր բառն ստեղծվել է այն ժամանակ, երբ ամ բառը նշանակում էր բազում տարիներ: Դա եղել է մեզնից երկուսից երեք հազար տարի առաջ: Ոչ ոք չի կարող ասել նրա ծննդյան ստույգ թվականը: Ամանորի հետ հայերը գործածել են նաև նավասարդ, տարեգույս, տարեմուտ բառերը: Նորաթույս բառ է նոր տարին: Նույնիսկ 18-րդ դարում նոր տարի շեն ասել: Հազիկ մի հարյուրամյակ է, որ նոր տարին եկել ու գրավել է Ամանոր բառի տեղը:

Ամանոր բառի մեջ ծալք-ծալք պատմություն կա: Այդ բառին հայերը մի թիշ երազանք են խառնել: Դա նշանակում է ոչ միայն նոր տարի, եկող տարի, այլև՝ եկող բազում տարիներ, այսինքն՝ կյանքը շարունակվում է, ամանորին հաջորդի մի ուրիշ ամանոր և այսպես անվերջ: Այնպես որ յուրաքանչյուր ամանորի մեջ կյանքի հարատեփության իմաստ, եկող ամարիների հեք կա: Հին հայը ոչ միայն ամ և տարի բառերը չի նույնացրել, այլև ամանորին հակադրել է տարին, որպես անցնող, անցավոր մի բան: 14—15-րդ դարերի հանձնարեղ իմաստասեր Գրիգոր Տաթևացին, պատասխանելիս այս 9003863 արցին, թե ինչ է նշանակում տարի, ասում է, որ տարին մ.թվականից մասնակառատված է, որը տանում է մարդու անց Ալիքրիդյանի մաքրության շորս եղանակները, ամիսները, շաբաթները, օրենթմաժերը:

Տարին տանում է, իսկ ամանորը բերանմախարակել հիյունիւրել մեր հները:

Հայկա տոմարով տարվա սկիզբ է Համացանի ծննդ-դից առաջ 2492 թվականի օգոստոսի 11-ը: Այդ օրը Հայ ծննդականի անվանադիր Հայկ Աղեղնավորն սպանել Հայութական թերին: Այդ ժողովրդին բերել ազատություն: Օգոստոսյան 10 թվականի առաջ Հայկ են նավասարդ, որ նշանակում է նոր Անարթ և Նեպառ ամրության, պմենալի Հայությունները տեղի էին ունենում Աղոթանի գետի ափերին, նպատ լեռան փեշերին, Բագրեանդում: Տոնամարտը ներկա էին լինում երկրի թագավորն ու թագուհին, Նշանական թագավոր Մետօքանի: Հայկական լինում երկրի թագավորն ու թագուհին, Նշանական թագավոր Արքայի: Հայկական բանակում կողմէ 10799 № 07 11 2018 թ.

էին մի քանի օր, որի ժամանակ տեղի էին ունենում Հետաքրքրական մրցություններ:

Պատմական տվյալները հավաստում են, որ մի որոշակի ժամանակահատվածում հայերն Ամանորը նշել են ոչ թե ամռանը, օգոստոսի 11-ին, այլ գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին: Դա տարեգլխի պատահական ընտրություն չէր: Հայ քրմերն իրենց բազմամյա դիտարկումներով նկատել են, որ բնությունը հարություն է առնում գարնան սկզբին: Այդ օրն էլ հայ մարդը դարձել է նոր տարի կամ նոր տարեգլուխ և նշել այն ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, հողագործի աշխատանքը, աղերսել աստվածներին, որպեսզի բերքառատ դարձնեն տարին:

Հետագայում հետևելով քրիստոնյա ժողովուրդների սովորություններին՝ հայերն Ամանորն սկսեցին տոնել հունվարի 1-ին: Մենք դրկամությամբ ենք ընդորինակել ու հաշտվել այն մտքի հետ, որ նոր տարին կարելի է տոնել ձմեռվա կեսին: Արևապաշտ, արեգակնատենչիկ հայի ոգուն անհարիր էր տարվա արևավառ մյուս եղանակները թողած ցնծության տոն Ամանորը նշել ձմեռվա բուքին ու սառնամանիքին:

Այսպիսով հայ ժողովուրդն իր պատմության բնթացքում Յ նոր տարի է ունեցել, որոնք դարերի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել: 1084 թվականին Հովհաննես Սարկավագ հմաստասերը տարվա սկիզբ է ընդունել օգոստոսի 11-ը, 1606-ին Ազարիա Զուղացին (իսկ 1707-ին՝ նաև Վարդան Կարբեցին) նոր տարին տեղափոխել է մարտի 21-ը, 1759-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսն իր կազմած օրացուցում տարվա սկիզբ է համարել հունվարի 6-ը՝ Քրիստոսի ծննդյան օրը: 1920-ին Հայաստանում պաշտոնապես ընդունվել է Գրիգորյան տոմարը և որպես տարեսկիզբ՝ հունվարի 1-ը:

Նոր տարվա հայերն 7 հոմանիշներն են: Ամանոր, Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Նոր տարի, Կաղանդ, Լոլե:

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ԱՄՄԱՆՈՒԽՆԵՐԸ

Նավասարդ. Հայոց հին տոմարի առաջին ամիսն է: Ամսանունը կազմված է նավ(նոր) և սարդ(տարի) բառերից և նշանակում է նոր տարի: Այս ամիսը սկսվել է օգոստոսի 11-ին և վերջացել սեպտեմբերի 9-ին: Հին հայերի համար այս ամսվա 1-ը (օգոստոսի 11-ը) եղել է ժողովրդական իրախճանքների տոն:

Հոռի. Հայոց տոմարի երկրորդ ամիսն է. սկսվել է սեպտեմբերի 10-ին և վերջացել Հոկտեմբերի 9-ին: Այս ամսանունը, ըստ պատմագիր ու տոմարագետ Վանական Վարդապետի (1181—1251), տորնշվում է նոր բառի հետ: Դա հավանաբար կապվում է տարվա այն ժամանակի հետ, երբ մարդիկ իրենց հավաքած բերքը՝ ցորենը, գարին, գինին և ալյն, ամրարում են հորերում: Ըստ ակադեմիկոս Ստ.

Մալխասյանցի, հորի նշանակում է ուրի ամիս, այսինքն՝ որթատունկի՝ այգեստանի ամիս:

Սահմի. Հայոց տոմարի երրորդ ամիսն է. սկսվել է հոկտեմբերի 10-ին և վերջացել նոյեմբերի 8-ին: Ըստ Վանական Վարդապետի, Սահմի անունն առնշվում է սահմանել բայի հետ, որովհետև իր այդ ամսում էր սահմանվում ձմռան նախապատրաստական աշխատանքների կատարումը: Ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, սահմի նշանակում է սերմանց ամիս:

Տրե. Հայոց տոմարի չորրորդ ամիսն է. սկսվել է նոյեմբերի 9-ին և վերջացել դեկտեմբերի 8-ին: Այս ամսանվան ծագումը կապում են հայոց դպրության աստված Տիրը անվան հետ:

Քաղոց. Հայոց տոմարի հինգերորդ ամիսն է. սկսվել է դեկտեմբերի 9-ին և վերջացել հունվարի 7-ին: Այս անունը կապում են բաղեցարայի հետ: Հր. Աճառյանը գտնում է, որ Քաղոցը կազմված է աւանաբունքներից բառերից (քաղ նշանակում է նոխազ, արու այժ) և կապված է անասունների զուգավորման ամսի հետ:

Արաց. Հայոց տոմարի վեցերորդ ամիսն է. սկսվել է հունվարի 8-ին և վերջացել փետրվարի 6-ին: Վանական Վարդապետն այս անունը գրում է Արանց, որովհետև սա այն ամիսն է, երբ ձյունապատճեններով ու բլուրներով միայն արանք (տղամարդիկ) կարող են ճանապարհ գնալ:

Մեենկան (Մեենկի). Հայոց տոմարի յոթերորդ ամիսն է. սկսվել է փետրվարի 7-ին և վերջացել մարտի 8-ին: Վանական Վարդապետն ամսանունը կապում է տարվա այն ժամանակի հետ, երբ տունայդ առաջ առնանձն կապում է տարվա այն ժամանակի հետ: Կերն ու բույսերը գտնվում են գեռնես մեռյալ, ձյունաթաղ վիճակում:

Արեգ. Հայոց տոմարի ութերորդ ամիսն է. սկսվել է մարտի 9-ին և վերջացել ապրիլի 7-ին: Ամսանունն առաջացել է արեգակ բառից: Այսպիսի 7-ին ապրիլի 7-ին: Ամսանունն առնշվում է բնությունը: Խոր անհայտ ամսին արեգակի զորությամբ արթնանում է բնությունը: Խոր անհայտ հայերն իրենց Տարեգլուխը՝ նոր տարին սկսում է ին ցալում, երբ հայերն իրենց Տարեգլուխը՝ նոր տարին սկսում է ին ցալում:

Աբենկան. Հայոց տոմարի իններորդ ամիսն է. սկսվել է ապրիլի 8-ին և վերջացել մայիսի 7-ին: Ամսանունն առնշվում է կրակ, նուրբառերի հետ: Այդ ստուգաբանությունը կապվում է գարնան պարփակության ամսին: Արեգը եղել է հայոց տոմարի առաջին ամիսը:

Մարերի. Հայոց տոմարի տասներորդ ամիսն է. սկսվել է մայիսի 8-ին և վերջացել հունիսի 6-ին: Ըստ Վանական Վարդապետի, դա այս ժամանակին է, երբ մայրիք (ծառերը) կանաչում են ու տերեակաւում:

Մարգաց. Հայոց տոմարի տասնմեկերորդ ամիսն է. սկսվել է հունիսի 7-ին և վերջացել հուլիսի 6-ին: Անունը կապում են մարգ բառի, այսինքն՝ խոտհնձի, խոտհարքի հետ:

Հըռամից. Հայոց տոմարի տասներկուերորդ ամիսն է. սկսվել է հուլիսի 7-ին և վերջացել օգոստոսի 5-ին: Անունն առաջացել է հուր-

բառից, որովհետև ամիսը համընկնում է տարվա ամենաշող ժամանակին:

Ավելյաց. Հայոց տոմարի տասներեքերորդ (լրացուցիչ) ամիսն է. ունեցել է 5 օր՝ հասարակ տարիներին և 6 օր՝ նահանջ տարիներին: Սկզբել է օգոստոսի 6-ին և վերջացել օգոստոսի 10-ին: Ավելյաց նշանակում է ավելացած՝ տարվա 12 ամսից ավելացած օրերը:

Ենթադրվում է նաև, որ հայոց ամսանունները դիցաբանական ծագում ունեն: Որոշ տոմարագետներ գտնում են, որ հայոց տոմարի ամիսները կոչվել են Հայկ Աղեղնավորի 12 ուստրերի և դուստրերի անուններով:

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Անուններ են ունեցել նաև հայկական ամսվա բոլոր 30 օրերը և Ավելյաց ամսվա 5 օրը: Ահա դրանք.

1. Արեգ, 2. Հրանի, 3. Արամ, 4. Մարգար, 5. Ահեանի, 6. Մագդել, 7. Աստղիկ, 8. Միհր, 9. Սոպարե, 10. Սուրբ, 11. Երեխիան, 12. Աճի, 13. Պարիար, 14. Վահապուր, 15. Արամազդ, 16. Մանի, 17. Ասակ, 18. Մասիս, 19. Անահիտ, 20. Արագած, 21. Գրգոր, 22. Կորդոփի, 23. Մմակ, 24. Լուսեակ, 25. Ցրն, 26. Խպատ, 27. Վահագի, 28. Սիմ, 29. Վարագ, 30. Գիշերավոր:

ԱՎԵԼՅԱՅ ԱՄՍՎԱ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ

1. Փայլածու, 2. Արույշակ, 3. Հրատ, 4. Լուսերազ, 5. Երեակ:

Այս օրանունները ոչ միայն արտացոլում են Հայկական լեռնաշխարհի նշանավոր տեղանունները, այլև հայոց յուրովի դիցաբան են:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայերն ունեցել են ոչ միայն իրենց ազգային ամսանուններն ու օրանունները, այլև օրը (գիշերն ու ցերեկը) բաժանել են 24 հավատար մասերի (ժամերի) և դրանց տվել հետեւալ անունները:

ՅԵՐԵԿԱՆ ԺԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Այգ, Մայզ, Զայրացյալ, Ճառագայթյալ, Շառափիլյալ, Երկրատես, Եանքակող, Հրակար, Հուռփալլյալ, Թաղանքյալ, Արագոտ, Արփող:

ԳԻԾԵԲՎԱՆ ԺԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Խավարուկ, Աղջամուղ, Մբացյալ, Շաղավոտ, Կամավուտ, Թափական, Հափարափյալ, Գեղակ, Լուսանիմ, Առավոտ, Լուսափյալ, Փայլածու:

Այս անունների մեջ ի հայտ է գալիս հին հայերի գեղագիտական

ձաշակը՝ ցերեկվա ու գիշերվա առանձին պահերի երանգները զանագնելու հարցում: Դրանցից մի քանիսը ժամանակակից հայերենում պահպանվել են արդեն ոչ թե որպես ժամանուն, այլ ցերեկվա ու գիշերվա որևէ պահը ցուցանող հասկացություն (օրինակ, այգ, աղջամուղ, առավուտ):

Տ Բ Տ Ո Ւ

Տրտուն կամ Թարթառը Արցախի մայր գետն է, Կուր գետի աջ վտակը, Երկարությունը 200 կմ է: Ակիզբ է առնում Ղարաբաղի բարձրավանդակից, 3158 մետր բարձրությունից: Ակունքները բխում են Ռումբասար լեռներից, Մուավ սարից: Մակար Բարխուղարյանը Տըրտուն կոչել է Արցախի նեղոս: Միջնադարյան հայ գուսաններից մեկը գրել է:

Հարյուր վաթսուն և վեց առվի մայր,
Դարձյալ հզոր ու հորդառատ իմ Տրտուն:

Ժամանակին Տրտունի վրա եղել են քառասունից ավելի կամուրջներ: Այժմ մնացել են մի քանիսը: Ամենահին կամուրջը կառուցվել է մ.թ.ա. առաջին դարում, հայոց Տիգրան Բ Մեծ արքայից արքայի ժամանակներում և կոչվել է Տիգրանական: Գտնվում էր Զքարերդից քիչ ներքեւ: Պահպանվել են այդ կամրջի խելերը:

Տրտունի վրա են կառուցված Մարսանգի ջրամբարն ու էլեկտրակայանը: Վերջինս էներգիայով ապահովում է Երևանին Ղարաբաղի Հանրապետության պահանջները:

Տրտուն արցախահայերի սրբազն գետն է:

ՋԱՆԱՋԱՆՆԵՐԸ

1989 թվականից էջմիածին բաղակում Սուրբ էջմիածին տաճարին, Մայր արռոին հարող հրապարակը անվանակոչվել է Գրիգոր ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Անվան:

1989 թվականից էջմիածին բաղակում Արարատյան պողոտային հարող՝ դեպի Գրիգոր Լուսավորչի հրապարակը տաճող Կոմունարեների փողոցը վերանվանվել է 301 ԹՎԱԿԱՆԻ անվան:

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՎԻ ՊԱՏԳԱՄԸ

Աշխատիր Հրճիկ քո ունեցածով
Ուշտանալ չունեցածով...
Աշխատիր Հրճիկ օրվա տվածով
Ու լվշտանալ չուվածով...
Աշխատիր Հրճիկ հայտնարերածով
Ու լվշտանալ չհասցրածով...
Թեկուզ գտածդ կաթի է նուին,
Բակ գտածդ ահուի ծով...

ՓԵՏՐՎԱՐ

1995

Երկուշաբթի	6	13	20	27	5	12	19	26
Երեքշաբթի	7	14	21	28	6	13	20	27
Չորեքշաբթի	1	8	15	22	7	14	21	28
Հինգշաբթի	2	9	16	23	1	8	15	22
Որրաթ	3	10	17	24	2	9	16	23
Շաբաթ	4	11	18	25	3	10	17	24
Կիրակի	5	12	19	26	4	11	18	25

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒԻ ՏՈՆԵՐԸ

Փետրվարի 14-ին

Տեղանցնդառաջ, Քրիստոսի քառասնօրյա ընծայումը՝ տաճարին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱԿԱՆԻ

Խղճմտանք ունեցողի հանդեպ Աստծու բարեհաճուրյունը կիրակի շունի:

Առանց Աստծու փեշին խավելու մարդկային երշանկության ակրեարգը օր ու տարի չի դառնա:

Գծի աղունք Աստված է աղում:

ԱՍՏՎԱԾԱՌԱԽԶ

Աստվածաշունը մարդկային քաղաքակրթության մեծ նվաճումներից է: Նրանում ամփոփված են անհիշելի ժամանակներից եկող կյանքի փիլիսոփայությունը, մարդկանց կուտակած վիթխառի կենսափորձը, տիեզերքի, աշխարհի արարման ու պատմական անցընթիք վերաբերյալ մեր նախնիների պատկերացումները, որոնք հաճախ սերտորեն առնչվում են գիտության տվյալներին:

Աստվածաշունը բաղկացած է երկու մասից՝ Հին կտակարան և Նոր կտակարան: Ամբողջ Աստվածաշնչի մեջ մտնում են 75 տարբեր գրքեր, որոնցից 48-ը Հին կտակարանի գրքեր են, 27-ը՝ Նոր կտակարանի: Այս գրքերը գրվել են շուրջ 40 հետինակների կողմից և տարբեր ժամանակներում՝ 1500 տարիների ընթացքում: Հին կտակարանի գրքերը գրվել են Հիսոսու Քրիստոսի ծննդից առաջ, այսինքն՝ նախքան 1 թվականը: Այդ գրքերը գրվել են Հին Հրեերեն (եբրայերեն): Նոր կտակարանի գրքերը գրվել են Հիսոսի խաչելությունից հետո՝ մինչև առաջին դարի վերջը (մինչև 1 թվականը), հին հունարեն:

Հրեա հոգևորականները դեռ շատ հնում Հին կտակարանի գրքերը հավաքել ու միավորել են որպես մեկ ամբողջական գիրք: Քրիստոնյա հոգևորականներն էլ հավաքել, ստուգել ու որպես մի ամբողջական գիրք միավորել են նոր կտակարանները միասին մի ամբողջական գրքում կազմել են Աստվածաշունը մատյանը, որը զարդ շարունակ քրիստոնյա ամբողջ աշխարհի Սուրբ գիրքն է եղել և է:

Հույներն այն անվանել են հենց Գիրք, Հունարեն՝ Բիբլիա: Այս անունը տարածվեց աշխարհի լեզուների մեջ, իսկ հայերը գիրքը կոչեցին Ճիշտ անունով՝ Աստվածաշունը:

Աստվածաշունը ամբողջությամբ կամ նրա առանձին մասերն այսօր թարգմանված են ավելի քան 1700 լեզուներով: Դա ամենից ավելի շատ թարգմանված ու հրատարակված գիրքն է:

Հայերն աշխարհում առաջիններից էին, որ թարգմանեցին Աստվածաշունը: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը և վարդապետ Մեսրոպ Սաշտոցն իրենց աշխակերտների հետ՝ սկսած՝ 405 թվականից, շուրջ 30 տարում, ամբողջությամբ թարգմանեցին Հին ու նոր կտակարանները: Այդ թարգմանությունը լավագույնն է մյուս թարգմանությունների մեջ, ուստի և կոչվում է թարգմանությունների թագուհի:

Հայերն առաջիններից են եղել նաև Աստվածաշունը տպագրելու գործում: Հին կտակարանի գրքերից մեկը՝ Սաղմոսարանը, հայերն առաջին անգամ տպագրվել է 1565 թվականին, Վենետիկում, Արգար Դպիր Թոխաթեցու կողմից:

Հայերն ամբողջ Աստվածաշունը առաջին անգամ տպագրվել է 1666—1668 թվականներին, Ամստերդամում, Ուկան վարդապետ Երեւանցու կողմից: Դա 1436 էջանոց մի հսկա գիրք է, գեղեցիկ նկարագրություններով: Դրանից հետո հայերն Աստվածաշունը թե՛ գրարար, թե՛ աշխարհաբար շատ անգամ է տպագրվել: Ամենից ավելի շատ տպագրվել է նոր կտակարանը:

Աստվածաշունը մեծ գիր է կատարել հայ ժողովրդի մտավոր ու Հոգևոր զարգացման գործում, նրա ազգեցցւյունը հսկայական է հայ զգականության, արվեստի, պատմագրության, բանասիրության վրա: Հայոց Հին ու միջնադարյան գրականությունը հասկանալու համար կարևոր է Աստվածաշնչի իմացությունը:

ԶԱՆԱԶԱՆԻ

Անվանի բանասեղծ ու բանասեր՝ Արքեն Թագրատունու գանգը պահվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Միհրարշան միարանուրյան բանագրանուում:

Օ՛ տայր ինձ գծում ծխանի
Եվ զառավոտն նավասարդի,
Զվագելն եղանց
Եվ զվարգելն եղշերուաց.
Մեք փող հարուաք
Եվ թմբկի հարկանեաք
Որպես օրեն էր թագավորաց:

Սա հայկական Ամանորին նվիրված ամենահին ստեղծագործությունն է: Քերթողական այս հանճարեղ բեկորը, որ ստեղծել են Գողթան գուսանները, գրի է առել և մեզ հասցրել Գրիգոր Մագիստրոս Պահապետնին: Ռատունասիրողները հավաստում են, որ այս խոսքերն արտասանել է Հայոց մահամերձ արքա Արտաշես Բ-ն, որը եղել է Արտավազդ Բ-ի որդին և թագավորել է Քրիստոսի ծննդից առաջ 30—20 թվականներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Աստվածապաշտ ու աշխատասիր մարդր նույնիսկ սովի տարում սոված չի մնա:

Ոչ ո՞չ չի կարող Աստծու տվածն ամբողջովին հափշտակել:
Բարությունը հալեցնում է, ատելությունը՝ սառեցնում, աստվածապաշտությունը՝ բարեխառն դարձնում:

Աստծուց շվախեցողի նամիֆան շուտ է թեմվում:
Հնարավո՞ր է, որ Աստված մի օր վերածելի իր ստեղծած աշխարհը: Այս հարցին աստվածարաեր պատասխանեց: ոչ, Աստված կատարյալ է ստեղծել աշխարհը, մարդ դեռ չի հասցրել կարգին նայելու իր շուրջը: Եթե հայեր՝ կիմանար, որ ամենակատարյալ բանը Աստծու ստեղծած աշխարհն է:

ԹՈՒԱՆՍ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԽԱՂԾ

Թոռու՝ 9 տարեկան Արամբ, 1993 թվականի հունվարի 21-ին ամաց.

— Պապիկ, ես մի խաղ եմ հնարել, որք մի ժի, խելոքացնում է: Օրինակ, 7 տառանի ԽԱՂԱԼԻՔ բառի մեջ իրաւ հաջորդող 7 բառ կա. խաղ, աղ, խաղալ, աղալ, ալ, ալիք, լի: 10 տառանի ԱՆԿԱՐԳԱՊԱՀ բառի մեջ 10 բառ կա. անկար, նկար, կա, կար, անկարգ, կարգ, գա, ապա, պահ, ահ:

1995

1996

Երկուշաբթի	6	13	20	27	4	11	18	25
Երեքշաբթի	7	14	21	28	5	12	19	26
Չորեքշաբթի	1	8	15	22	6	13	20	27
Հինգշաբթի	2	9	16	23	7	14	21	28
Ռուրաթ	3	10	17	24	31	1	8	15
Շաբաթ	4	11	18	25		2	9	16
Կիրակի	5	12	19	26		3	10	17
						24	31	

Մյուսոնի (մեռոնի) պատմությունից

ԵՂԻՌՈՒԻՑ

Հայոց աշխարհում ծառապատ յոթ անկյուն կա, որտեղից բացվող ամեն մի տեսարան յոթնապատիկ դրախտ է թվում մարդուն: Դրանցից մեկը եղրդուտն է, որ գտնվում է Տուրուբերանի Տարոն գավառում, Մուշ քաղաքից ոչ հեռու, Մշո դաշտի հարավ-արևմտյան կողմում, Սիմ լեռան վրա՝ անտառախիտ մի տեղ: Այստեղից նայելիս աշշիդ առջև բացվում է Մշո լնդարձակ, ծիծաղախիտ ու կանաչավետ քաշտր: Դա արտասովոր գեղեցիկ ու ակնապարար տեսարան է: Ասում դաշտը: Դա արտասովոր գեղեցիկ ու ակնապարար տեսարան է: Ասում դաշտը: Ենում մշեցի ծերունիները գալիս էին Եղրդուտ, ըմբռշմնում այդ են հնում մշեցի ծերունիները գալիս էին Եղրդուտ, ըմբռշմնում տուն: Տեսարանը և քսան տարով երիտասարդացած վերադառնում տուն: Եղրդորդ գարում այստեղ վանք է կառուցվել: Ոմանք նրա հիմնադրումը վերագրում են Թաղեսու Առաքյալին, իսկ Քերթողահայր Մովսես Խորենացին գրում է, թե այն կառուցել է Մեծն Վրթանեսի Հայրը: Մինչև Եղրդուտ անունն ստանալը սա կոչվել է Շիշ յուղուանք: Յուղի շիշը նշանակում է նաև մյուսոնաման: Մյուսոնը բուրավետ նյութ է, որ կաթողիկոսի օրհնությամբ ու ձեռքով պատրաստվում է ձիթապատղի յուղից՝ խառնելով բալասան և քառասուն տեսակ հոտավետ խունկեր, փայտեր ու բույսեր: Ապա այն բաժանվում է Հայոց հեկեղեցու բոլոր թեմերին և օգտագործվում եկեղեցական ծեսերում: Հայկական մագաղաթյա մի ձեռագրում՝ գրված ամի 1669, կամի գրվածք, որ կոչվում է «Պատմություն մեռոնօրհնության մասին»: Ահա նրա կարճառութը: «Մովսես մարգարեն Սինա լեռան վրա Աստծուց անուշահուտ ծաղիկներ ստանալով՝ պատրաստեց դրանցից մեռն, որով հետագայում օծում էին մարգարեներին և թագավորներին: Երբ իսրայելացիները հաստատվեցին Ավետյաց երկրում, այդ մեռոնը պահպատ էր իրենց մոտ՝ երուսաղեմի տաճարում: Տաճարի կործանումից հետո, Եղիսաբեթը՝ Զաքարիա քահանայի կինը, մեռոնը տարավ լեռան վրա և ճեղքելով ժայռը՝ այն պահեց այնտեղ:

Զաքարիայի և ծղիսարեթի որդի Հովհաննեսն սկսեց մկրտել: Նա այդ մեռոնով օծում էր ժողովրդին: Երբ Հերովդես թագավորի հրամանով զլիսատեցին Հովհաննեսին, մեռոնը վերցրեց. մի մեղավոր կին (Մարիամ Մագդաղենացին), որն էլ հետագայում դրանով օծեց Քրիստոսին:

Դրանից հետո, երբ Քրիստոսի աշակերտները մեկնեցին Ավետարանի քարոզության, այդ մեռոնն իր հետ վերցրեց թաղեռս Առաքյալը՝ հայոց առաջին լուսավորիչը, որի միջոցով բուժվեց Արքար թագավորի որդին: Թաղեռս Առաքյալը մեռոնը մի ժամի վրա թողնելով՝ մեկնեց Սանատրուկ թագավորի մոտ: Հետագայում մեռոնի պահպաժ տեղի մասին տեսիլքով իմացավ հայոց երկրորդ լուսավորի Գրիգորը, որը Տրդատ թագավորի աջակցությամբ այդ վայրում կառուցց մի եկեղեցի՝ Հովհաննես Կարապեսի (Մկրտչի) անունով: Այստեղ, Եղբրդում վայրում, պահպում է անսպառ այդ մեռոնը: Այստեղ էլ գտնվում է Եղբրդուտի հայտնի միաբանությունը»:

Տեսնո՞ւմ եք, թե որտեղից է սկիզբ առնում հայկական մյուռոնը: Այսպես որ դա միայն ծիսական արարողության համար սոբազան համարվող հեղուկ չէ, այլ տարեգրություն, սովորութիւն, ժամի ավիշի ու ժաղկահյութի, խնկի, ուստինի, խեժի պատմություն:

Ամեն անգամ նոր մյուռոնի մեջ հին մյուռոն է խառնվում: Եվ յուրաքանչյուր նոր մյուռոնի (վերջին մյուռոնը պատրաստվել է 1991 թվականի սեպտեմբերի 29-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վաղգեն Առաջինի օրնությամբ) մեջ մի մասնիկ, մի ճառագայթ կա Գրիգոր Լուսավորչի օրնած առաջին մյուռոնից:

Մյուռոնի հետ կապ ունեցող հայոց ամենահին վանքը Եղբրդուտըն է, որի համար էլ այն որոշ ժամանակ անվանել են Շիշ յուղութայց մեկուկես հազարամյակ վանքը կոչվել է Եղբրդուտ այդտեղ աճող եղրդի ժառերի պատճառով: Եղբրդին կամ եղվրդին ուսենու նման, բայց հուտափիտ ծառ է, որի սոստերից կողովներ են գործում և ցախավել կապում:

Մի անգամ Եղբրդուտի վանահորը հարցրին.

— Այս ծառը համարյա չի տարբերվում ուսենուց, ինչո՞ւ սրան ուսենի չեն ասում:

— Ուռ նշանակում է ճյուղ, ոստ, ստեղն, ընձյուղ, սրանից է առաջացել ուսի անունը, որի իմաստն այն է, թե դա անպոտու և միայն ուռ տվող ծառ է: Իրավ է, մեր եղրդին էլ է փափուկ ու ճկուն ճյուղեր տալիս կողով ու վան ճյուսելու համար, բայց սրանք ուսենու ճյուղեր չեն, նույր են ու դյուրահյուս: Դրա համար էլ եղրդի է կոշվում և ոչ թե ուսենի:

ՀԵՎՈՆ ՄԻՒՐԻՉԱՆՅԱՆ

Ա-Վ ՍԻՐՈՒՆ-ՍԻՐՈՒՆ
(Ժողովրդական)

Ո՞վ սիրուն-սիրուն, երբ որ ես կրկին
Հանդիպում եմ քեզ իմ ճանապարհին,
Նորից այրում են հուշերս անմար,
Նորից կորչում են և քուն, և զադար:

Ո՞վ սիրուն-սիրուն, ինչո՞ւ մոռեցար,
Սրտիս գաղտնիքը ինչո՞ւ իմացար.
Մի անմեղ սիրով ես քեզ սիրեցի,
Բայց զու, անիրավ, գաղաճանեցիր:

Ա-Խ, Եթե տեսնեմ ես օրից մի օր՝
Երշում ես զու էլ տիտուր ու մոլոր,
Ընկեր կդառնամ ես քո վշտերին,
Մենակ չեմ թողնի իմ սիրած յարին...

1958

Փ Ո Ր Դ Ա Ն

Թորդան ավանը հնում մտնում էր Բարձր Հայք նահանգի Դարանադի գավառի մեջ: Գտնվում էր Սեպուհ լեռան արեւելյան լանջին: Ե՞վ հեթանոսության շրջանում, և քրիստոնեության տարածման ժամանակ եղել է կրոնական նշանավոր կենտրոն: Այստեղ են թաղվել Գրիգոր Լուսավորչը, մի քանի ուրիշ կաթողիկոսներ, Տրդատ Գ թագավորը, հայ Արշակունի ուրիշ թագավորներ:

Թորդան տեղանվան երկու բաղադրամասերն էլ գրեթե նույն իմաստն ունեն: Թոր նշանակում է զրի պես վագել, դան կամ դոն նշանակում է զուր (հենց Գոն գետի անունն ունի զուր իմաստը): Այսպիսով Թորդան նշանակում է վագող զուր, զրաշատ վայր: Այդպիս է կոշվել, որովհետեւ Սեպուհ լեռան այն լանջը, որի վ ա ավան է կառուցվել, եղել է աղբյուրաշատ:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Ամերիկյան դուռարի հատուկ կանաչ գույնը ստացել է հայ քիչիկոս խաչատուք Սեպուհյանը՝ 19-րդ դարի 1-ին կեսին:

ԱՊՐԻԼ

1995

1996

Երկուշաբթի	3	10	17	24	1	8	15	22	29
Երեքշաբթի	4	11	18	25	2	9	16	23	30
Չորեքշաբթի	5	12	19	26	3	10	17	24	
Հինգշաբթի	6	13	20	27	4	11	18	25	
Ուրբաթ	7	14	21	28	5	12	19	26	
Շաբաթ	1	8	15	22	6	13	20	27	
Կիրակի	2	9	16	23	7	14	21	28	

Հիշատակի օր

Ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օրն է (ոչ աշխատանքային օր):

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Հայաստանի Հանրապետության Գերազույն խորհրդի 1994-ի մարտի 30-ի որոշմամբ ապրիլի 7-ը հայտարարվել է Մայրության և գեղեցկության տոն (ոչ աշխատանքային օր):

Հայ առաքելական եկեղեցին այդ օրը նշում է որպես Սուրբ Մարիամ Աստվածածնի ավետման օր (Մարիամ Աստվածածնի հղիանալու օրը):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՁԱՐԸ ՀԱՎԵԲԺՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Հայոց թագավոր Աբաս Բագրատունին, որը եղել է Սմբատ Առաջին Բագրատունի թագավորի կրտսեր որդին և Աշոտ Բ Երկաթ Բագրատունու եղբայրը, տասներորդ դարի երեսելիներից էր: Շինարար այր էր: Սպարապետանիստ Կարս բերդաքաղաքը դարձրել էր արքայանիստ, այնտեղ հիմնել Առաքելոց եկեղեցին, որը մինչև այժմ էլ կանգուն է:

Ասքը նրա մասին ասում է. մի անգամ զորապետներից մեկը դիմում է նրան և ասում.

— Տեր իմ, մինչև արքա դառնալը դու սպարապետ էիր, իսկ սպարապետը պետք է ամրոց կառուցի և ոչ թե եկեղեցի:

— Եկեղեցին էլ հոգեւոր ամրոց է, գորապետ, — պատասխանում է Աբաս Բագրատունին, — բոլոր ամրոցներն էլ ի վերջո քանդվում են և հազվադեպ են վերակառուցվում, իսկ եկեղեցական տաճարները երկար կյանք են ունենում, կարելի է ասել՝ գրեթե հավերժում են ժողովրդի հետ:

ՄԱՅԻՍ

1995

1996

Երկուշաբթի	1	8	15	22	29	6	13	20	27
Երեքշաբթի	2	9	16	23	30	7	14	21	28
Չորեքշաբթի	3	10	17	24	31	1	8	15	22
Հինգշաբթի	4	11	18	25		2	9	16	30
Ուրբաթ	5	12	19	26		3	10	17	31
Շաբաթ	6	13	20	27		4	11	18	25
Կիրակի	7	14	21	28		5	12	19	26

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Մայիսի 28-ը Հայաստանի Հանրապետության Անկախության օրն է (ոչ աշխատանքային օր):

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Մայիսի 9-ը Խաղաղության տոնի օրն է (աշխատանքային օր):

451 քլականի մայիսի 26-ին տեղի ունեցավ Ավարայրի նակատամարտը:

* * *

1918 քվականի մայիսի 22—28-ին տեղի ունեցավ Սարդարապատի հերոսամարտը:

* * *

1918 քվականի մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Համբարձումը Հիսուսի փառավորյալ մարմնով երկինք բարձրանալու ու իր հոր՝ Աստծու աջ կողմը նստելու հիշատակն է: Համբարձումը տեղի ունեցավ Զիթենյաց լեռնա վրա, առաքյալների աշքի առաջ: Այժմ լեռը կոչվում է Համբարձման լեռ:

Համբարձման օրը գույնզգույն զգեստներ հագած աղջկները ժաղկ քաղելով և զան գյուղում երգելով կազմակերպում են զրուանք և վիճակախաղ: Զան գյուղումը կարելի է համարել հեթանոսական շրջանի գարնանային պաշտամունքի մնացորդ, երբ գովերգում էին ժաղկները և ապագայի համար գուշակություններ կատարում:

ՄԵՆ ՀԱՅՐԵՆԱՍԽԵՐԸ

Ֆրանսահայ երգի ու երգահան Շառլ Ազնավուրը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշրջից հետո նյուրական հսկայական օգնություն է ցուցաբերել մայր հայրենիքին: Գյումրեցիներն ասում են, որ Շառլը երկնքից իշխած հրեշտակ է, որի աշխին նախ Գյումրին է երես, հետո աշխարհի մյուս կողմերը:

charles

U T'AMUSES

TE SUFFISAIT
UE JE T'AIME

ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻ

Սուրբ գիրքն աշխարհի բոլոր լեզուներում կոչվում է Բիբլիա, այսինքն՝ գիրք, և միայն հայերենն է, որ ի զորում է եղել ճշգրիտ թարգմանել այն Աստվածաշունչ: Լեզվի գեղեցկության հետ հայերեն Աստվածաշունչն ունի մի այլ արժանիք ևս. այն, լինելով խիստ հայեցի, միաժամանակ զարդանալիորեն ճիշտ է արտացոլում թագրի միտքն ուղին: Այդ պատճենով էլ ֆրանսիացի նշանավոր գիտնական լաւ ուղին: Այդ Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը համարել է թագուհու կողմուն թարգմանությունների մեջ:

ՀՈՒՆԻՍ

	1995	1996
Երկուշաբթի	5 12 19 26	3 10 17 24
Երեքշաբթի	6 13 20 27	4 11 18 25
Չորեքշաբթի	7 14 21 28	5 12 19 26
Հինգշաբթի	1 8 15 22 29	6 13 20 27
Ուրբաթ	2 9 16 23 30	7 14 21 28
Շաբաթ	3 10 17 24	1 8 15 22 29
Կիրակի	4 11 18 25	2 9 16 23 30

Համեմատի 1-ը երեխաների պաշտպանության միջազգային օրն է:

ՄԵՆ ՔԻ՞Ց

Պատմություն փաստերը հավաստում էն, որ նշանավոր ձարդկանց շատերը մեծ քիթ են ունեցել: Դրա համար էլ ասում են, թե մեծ քիթ ունեցողն արտասովոր ընդունակություններ է ունենում:

Պլուտարքոսի վկայությամբ, Հռոմի հողակավոր օրենսդիր Նումա Պոմպիլիոսի քիթն ուներ ավելի քան 15 սանտիմետր երկարություն:

Մեծ քիթ ունեին նաև կիկուրգոսն ու Սոլոնը:

Հռոմեացի բանաստեղծ Օվիդիոսի քիթն այնքան մեծ էր, որ իր ժամանակակիցները նրան կողում էին նազո, այսինքն՝ մեծ քիթ:

Խոպացի հողակավոր բանաստեղծ Դանիելն ևս շատ մեծ քիթ է ունեցել: Մեծ քիթն կարուրություն է տվել նապոլեոն Բոնապարտը: Նա վստահում էր միայն մեծ քիթ ունեցող մարդկանց և բարձր պաշտոնների էր նշանակում այդպիսիներին: Բ. Սույնեանիերուն:

Մեծ քիթ են ունեցել և ունենան շատ հայեր: Հնագույն դրամների վրա գրոշմված դիմանակարների համաձայն, մեծաքիթ են եղել հայ երվանդունիների և նրանցից վերընձյուղված Արտաշեսյանների արքայատան անդամներից շատերը: Մեծ քիթ է ունեցել Տիգրան Բ Մեծ արքայից արքան:

Մեր ժամանակակիցներից մեծ քիթ են ունեցել կոմպոզիտոր Առնե Բաբաշանյանը, շախմատի աշխարհի շեմպիոն Տիգրան Պետրոսյանը, ժողովրդական դերասան Մհեր Մկրտչյանը: Եվ ըստինարապես հայ երենիների մեջ շատ են մեծաքիթ այրիբը որոշում:

«Mesrop Mkrtchian University»

10799

07

11

2018



Մեծ Թրիտանիայի կորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քոնքը հայ ծողովրդի մեծագույն բարեկամն է: Նա ամեն ինչով օգնել է արցախահայոթյան մղած ազատագրական պայքարին: 1994-ի փետրվարի 21-ին բարոնուհուն հանձնվել է հայ մեծանուն պատմիչ Եղիշեի անվան առաջին հատուկ մրցանակը՝ «Էրնիկ Մաքրուրյան առաջնացում» գրքի համար:

ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԱՎՈՒՆԻՒ

Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահավունին գահական է 1113—1166 թվականներին: Ամենայն հայոց բարոր 130 կարողիկունների մեջ ամենից երկար գահականի է ինքը (53 տարի):

